ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի փետրվարի 6-ից 9-ը

Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը Ազգանունը՝**

   Արամ Սայամյան, Միեր Ուլիխանյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ ՊԵԿ մաքսային հսկողության վարչության ապրանքների դասակարգման և սակագնային կարգավորման բաժնի գլխավոր մաքսային տեսուչ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Բելգիայի Թագավորություն, ք. Բրյուսել, փետրվարի 6-ից 9-ը

4. **Հրավիրող կողմը՝**

   Համաշխարհային մաքսային կազմակերպութուն (ՀՄԿ)

5. **Գործուղման նպատակը /աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/՝**

   ՀՄԿ Ծագման կանոնների տեխնիկական կոմիտեի հերթական՝ 42-րդ նստաշրջանի աշխատանքներին մասնակցութուն, մասնավորապես՝ նստաշրջանի օրակարգում ընդգրկված մի շարք հարցերի (ծագման հավաստագրերի թվայնացում (e-CO), ծագման ինքնահայտարարագրում, ՀՄԿ տարբեր հետազոտություններ և այլն) վերաբերյալ քննարկումներին մասնակցություն:

6. **Քննարկված թեմաները՝**

   Ծագման հավաստագրերի թվայնացման (e-CO) ռազմավարական հիմնահարցեր (տարբեր տարածաշրջաններում e-CO պիլոտային ծրագրերի մեկնարկների մասին)

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

   Օրակարգում ընդգրկված ծագման հետ կապված մի շարք ռազմավարական հարցերի վերաբերյալ քննարկումներին մասնակցություն:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Պայմանավորվածություն ձեռքբերվեց ժամանակավորապես կասեցնել Կիոտոյի վերանայված կոնվենցիայի «K» հավելվածի ծագմանն առնչվող բաժինների ուղեցույցի նախագծի մշակման աշխատանքները՝ հաշվի առնելով դրանում տեղ գտած հասկացությունների և դրույթների ոչ ակտուալ լինելու հանգամանքը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Առանձնակի ուշադրության արժանացավ ծագման հավաստագրման թվայնացման (e-CO) նպատակով որոշ տարածաշրջաններում տեղեկատվական բլոկ-շղթաների (blockchain) և այլ տեխնոլոգիաների կիրառումը, պրեզենտացիաների տեսքով դրանց ներկայացումը, որի արդյունքում առաջարկվեց այդպիսի տեխնոլոգիաների հիման վրա ծագման հավաստագրման թվայնացման աշխատանքների շարունակական ընդլայնումը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Արամ Սայամյան՝

Մհեր Ուլիխանյան՝

12.02.2024թ.